ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«29» «հունվար» 2026 թվական № 14-Լ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ Հարավային Կովկասի գեոպարկերի ցանցային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում ազգային գեոպարկի և Հայաստան-Վրաստան անդրսահմանային գեոպարկի ստեղծման աշխատանքներին օժանդակելու նպատակով (այսուհետ՝ աշխատանքային խումբ):
2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

1/29/2026

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան

Հավելված N 1
Շրջակա միջավայրի նախարարի
2026 թվականի հունվարի 29-ի
N 14-Ն հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Արա Մկրտչյան	շրջակա միջավայրի նախարարի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար),
Արման Ավետիսյան	շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետ,
Խաչատուր Խաչատրյան	շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության պետ,
Սևակ Մարկոսյան	էկոպարեկային ծառայության պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների ռիսկերի կառավարման վարչության պետ,
Հարություն Վանյան	կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ (համաձայնությամբ),
Դիանա Կարապետյան	էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության մարքեթինգի և խթանման վարչության պետ (համաձայնությամբ),
Աշոտ Գիլոյան	տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ (համաձայնությամբ),
Նարինե Հակոբյան	շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թվականների կոնվենցիայի բնության ժառանգության մասով ազգային պատասխանատու (աշխատանքային խմբի քարտուղար),
Հակոբ Մաթևոսյան	շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության պետի տեղակալ,

Արթուր Հովհաննիսյան	պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության զորքերի վարչության շտաբի պետ-վարչության պետի տեղակալ, գնդապետ (համաձայնությամբ),
Տիգրան Բաղդասարյան	արտաքին գործերի նախարարության բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության ՅՈՒՆԵՍԿՕ-ի և բազմակողմ կրթամշակութային համագործակցության բաժնի վարիչ (համաձայնությամբ),
Ատոմ Մխիթարյան	շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Արմինե Գևորգյան	շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ,
Մերի Աղաբաբյան	շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության ավագ մասնագետ,
Ռոման Սահակյան	ազգային անվտանգության ծառայության աշխատակից (համաձայնությամբ),
Վահրամ Բաբայան	ազգային անվտանգության ծառայության աշխատակից (համաձայնությամբ):

Հավելված N 2
Շրջակա միջավայրի նախարարի
2026 թվականի հունվարի 29-ի
N 14-Լ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում է Հարավային Կովկասի գեոպարկերի ցանցային ծրագրի շրջանակներում Վայոց ձորի մարզում ազգային գեոպարկի և Հայաստան-Վրաստան անդրսահմանային գեոպարկի ստեղծման աշխատանքներին օժանդակելու նպատակով ստեղծվող աշխատանքային խմբի գործունեությունը:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն կարգով և այլ իրավական ակտերով:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

3. Աշխատանքային խմբի գործունեության նպատակն է օժանդակել Հարավային Կովկասի գեոպարկերի ցանցային ծրագրի շրջանակներում Վայոց ձորի մարզում ազգային գեոպարկի և Հայաստան-Վրաստան անդրսահմանային գեոպարկի ստեղծման աշխատանքներին:

III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպվում է նիստերի և անհրաժեշտության դեպքում նաև դաշտային ուսումնասիրությունների միջոցով:

5. Աշխատանքային խմբի նիստերի ընթացքում քննարկվում են ծրագրի իրականացման ընթացքում կատարվող աշխատանքները:

6. Աշխատանքային խմբի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են

մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, մասնագետներ, փորձագետներ և ըստ անհրաժեշտության հրավիրված այլ անձինք:

7. Աշխատանքային խմբի անդամը պատասխանատու է աշխատանքային խմբի աշխատանքների արդյունավետ իրականացման համար, պարտավոր է մասնակցել աշխատանքային խմբի նիստերին:

8. Աշխատանքային խմբի ընդունած որոշման հետ անհամաձայնության դեպքում աշխատանքային խմբի անդամը ներկայացնում է գրավոր կարծիք, որը գրառվում է աշխատանքային խմբի նիստի արձանագրության մեջ և կցվում դրան:

9. Աշխատանքային խմբի անդամն իրավունք ունի աշխատանքային խմբի ղեկավարից ստանալ տվյալներ, հաշվետվություններ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

IV. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ

10. Աշխատանքային խմբի ղեկավարը հրավիրում է աշխատանքային խմբի նիստերը, ձևավորում է օրակարգը և վարում է նիստերը:

11. Աշխատանքային խմբի ղեկավարը ստորագրում է աշխատանքային խմբի նիստերի արձանագրությունները:

V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

12. Աշխատանքայի խմբի քարտուղարը նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում նյութերի տրամադրումն աշխատանքային խմբի անդամներին (պաշտոնական էլեկտրոնային փոստերի միջոցով), արձանագրում է աշխատանքային խմբի նիստերը և դրանց հիման վրա կազմում արձանագրություններ, վարում է աշխատանքների հետ կապված գործավարությունը, գրանցում է աշխատանքային խմբի անդամների ներկայացրած կարծիքները:

VI. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

13. Աշխատանքային խմբի գործունեությունը դադարեցվում է Հարավային Կովկասի գեոպարկերի ցանցային ծրագրի շրջանակներում Վայոց ձորի մարզում ազգային գեոպարկի և Հայաստան-Վրաստան անդրսահմանային գեոպարկի ստեղծման աշխատանքների ավարտից հետո: